Բանասիրության մեջ բազմիցս արձանագրված ու հայտնի իրողություն է այն, որ Առաքել Դավրիժեցին իր «Գիրք պատմութեանց» աշխատությունը գրել է երբեմն հարկադիր ընդմիջումներով, իսկ կյանքի վերջում, վերստին վերադառնալով կիսատ թողած գործին, նկատելիորեն շտապել է շարադրանքում՝ հետագայում առթելով Մանուկ Աբեղյանի դիտողությունը, թե «նա (Դավրիժեցին–Ա.Ն.) արագության ետևից է ընկած»[1]: Պատմագրքի վերջին որոշ գլուխներ, ըստ ամենայնի, պատմիչը նույնիսկ չի էլ հասցրել վերջնականապես մշակել, և դրանք, իրոք, ինչպես գրում է Լենա Խանլարյանը՝ «թողնում են սոսկ մի այնպիսի հենքի տպավորություն, որի վրա հեղինակը պատրաստվել է ստեղծել կենդանի պատումի հյուսվածքը»[2]: Եվ եթե նույնիսկ չլինեին էլ այդ հարկադիր ընդմիջումների մասին Դավրիժեցու երբեմն ուղղակի վկայումները հատկապես «Պատճառ առնելոյ զգիրս պատմութեանց, յորում և յիշատակարան առնողին» վերնագրով ԾԸ գլուխ-ավարտաբանության մեջ, ապա «Գիրք պատմութեանց» աշխատության լեզվի և ոճի, ու, ընդհանրապես, կառույցի տարտղնվածությունը անպայման կմղեր նման եզրակացության: Իբրև

---

1 ***Մանուկ Աբեղյան,*** Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, էջ 452:

2 ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, տե՛ս «Առաջաբանը», էջ 59: